

50 արգիլեն եւ չթողուն : Եւ սքանչելի ջուրս այս
որչափ քրիստոնէից աշխարհով դայ , ստակ եւ
բազ դայ . բայց երբ մտանէ յաշխարհս անհա-
ւատից պղտորի , շիտթի եւ փոխէ զգոյնն .
փա՛ռք Աստուծոյ :

55 Իսկ նոքա բնաւ չտան դաճար . ոչ չորս
սակի դուռն՝ վասն ջրին Միլ . վասն որոյ եւ
նոքա յառաջ թափօր կ'ելնեն եւ նախ մտնուն
եւ լոյս հանեն , ապա այլք . եւ պար առեալ
չուրջ զԳերեզմանաւ Քրիստոսի , ունին որպէս
60 վրան , զոր նովաւ շրջին . չարփար զարնեն , այլ
եւ ծնծղայս եւ աղաղակեն . Քիրիէ լէզիօն¹ .
քաղցր եւ համեղ եղանակաւ . նոյնպէս եւ ա-
մենայն խաչապաշտք դռչեն՝ ամենայն ազգ
իւրեանց լեզուաւ , մինչեւ գոռայ եկեղեցին :

ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ԿԱՆԹԵՂՆ

65 Բայց Հայոց՝ Պարոնտէր կամ դասասաց
վարդապետ մի ելանէ ամպիոնն եւ սկսանի քա-
րովել եւ ծանուցանել վասն բխման լուսոյն ,
ապա յորդորէ զժողովուրդն երանի տալով նո-
ցա , որ այնմ ժամու հանդիպեցան . վասն որոյ
70 պարտ է ահիւ եւ գողութեամբ , զղմամբ եւ
պաղատանօք եւ խոստովանութեամբ եւ սրբու-
թեամբ արժանանալ ասելեան լուսոյ եւ մեծաւ
պատրաստութեամբ սպասաւորել նմա : Իսկ
դառն աղքատքն որ մնացին ի դուռն , լան եւ
75 սղբան եւ խնդրեն զի մուծցեն զնա : Իսկ նոքա

52 աշխարհս :

¹ Κύριε, ἐλέησον.